

Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց շախմատի մարզային ֆեդերացիայի նիստին 05.11.2014թ.

Նոյեմբերի 5-ին մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց Տավուշի մարզպետարանում տեղի ունեցած մարզի շախմատի ֆեդերացիայի նիստին, որի օրակարգում ֆեդերացիայի նախագահի ընտրությունն էր: Ներկա էին Տավուշի մարզպետ Հովիկ Աբովյանը, Հայաստանի շախմատի ակադեմիայի տնօրեն, ՀՀ շախմատի ֆեդերացիայի նախագահի առաջին տեղակալ Սմբատ Լպուտյանը, Օլիմպիական կոմիտեի նախագահի տեղակալ Դերենիկ Գաբրիելյանը, մարզպետի տեղակալները, օգնականները, մարզպետարանի ստորաբաժանումների և համայնքների ղեկավարներ, դպրոցների տնօրեններ, մարզի տարածաշրջաններում դասավանդող շախմատի մարզիչներ: Ողջունելով ներկաներին, Սմբատ Լպուտյանը նշեց, որ այցի նպատակներից մեկը շախմատի մարզային ֆեդերացիայի նոր նախագահի ընտրությունն է: Հայտնեց, որ նախկինում այն ղեկավարել է Տավուշի նախկին մարզպետ Արմեն Ղուլարյանը, ապա որպես ՀՀ ֆեդերացիայի նախագահի առաջին տեղակալ, մարզի ֆեդերացիայի նախագահի համար առաջարկեց մարզպետ Հովիկ Աբովյանի թեկնածությունը, ինչը միաձայն ընդունվեց: Այնուհետև քննարկվեցին մարզում սպորտաձևն առավել աշխուժացնելու, շախմատի դասավանդման հետ կապված հարցեր: